

## Մասնագիտության նկարագիրը

<b>Պաշտոնի /զբաղմունքի/ անվանումը</b>	0811.06.5 «Պաշտպանված գրունտի կենսատեխնոլոգիա» մասնագիտություն 0811.06.01.5 «Պաշտպանված գրունտի տեխնիկ-ագրոնոմ» որակավորում
---------------------------------------	--

<b>I. Դերը</b>	<p>Պաշտպանված գրունտի տարբեր կառույցներում գնահատում է հողի որակը մշակաբույսի պահանջներին համապատասխան: Տիրապետում է պաշտպանված գրունտի կառույցներում սարքավորանքի օգտագործման անվտանգության կանոններին և կիրառում սարքերը և գործիքները: Տիրապետում է պաշտպանված գրունտի կառույցներում միկրոկլիմայի կարգավորման աշխատանքներին, գնահատում է մշակաբույսերում սննդատարրերի պակասի դրսևորումները և ձեռնարկում համապատասխան միջոցներ:</p> <p>Կազմակերպում է հողի պարարտացման աշխատանքներ, պատրաստում հողախառնուրդ: Կազմակերպում է ցանքի և սածիլման աշխատանքներ, կատարում հողի և բույսերի հիվանդությունների ու վնասատուների դեմ պայքարի միջոցառումներ:</p> <p>Տիրապետում է պաշտպանված գրունտում ոռոգման տեխնոլոգիաներին և համակարգերին, կազմակերպում կաթիլային ոռոգման և ցողարկման տեխնոլոգիաների և համակարգերի ներդրումը պաշտպանված գրունտում:</p> <p>Տիրապետում է բույսերի հիդրոպոնիկ եղանակով մշակության տեխնոլոգիային և գործնականում կիրառում դրանք:</p> <p>Կազմակերպում է բույսերի մշակության և վիրուսազերծ տնկանյութի ստացման և աճեցման աշխատանքներ:</p> <p>Կատարում է անհրաժեշտ փաստաթղթային գործավարություն:</p> <p>Հրահանգավորում է ենթակա աշխատողներին, հսկում նրանց աշխատանքը:</p> <p>Ապահովում է աշխատանքի անվտանգության կանոնների պահպանումը:</p>
----------------	--

### II. Խնդիրների բնագավառները

#### **Խնդիրների բնագավառ 1. Կազմակերպել և կատարել նախապատրաստական աշխատանքներ**

<b>Աշխատանքային գործընթացը</b>	<p>Ըստ մշակաբույսերի առանձնահատկությունների.</p> <p>վարակազերծել վիրուսազերծ տնկանյութի աճեցման համար անհրաժեշտ սարքավորանքները և գործիքները,</p> <p>պատրաստել տնկանյութի աճեցման համար անհրաժեշտ սննդային միջավայրը,</p> <p>կատարել վիրուսազերծ բույսերի աճեցման գործընթացը,</p> <p>նախապատրաստել արմատակալած բուսակները տնկման համար,</p>
--------------------------------	---

	<p>որոշել մշակաբույսերի վիրուսազերծ տնկանյութի աճեցման համար հողախառնուրդի կազմը, կատարել մշակաբույսերի վիրուսազերծ տնկանյութի խնամքի աշխատանքները, լրացնել նախապատրաստական աշխատանքների արդյունքների վերաբերյալ փաստաթղթերը:</p>
<p><b>Կատարման չափանիշներ</b></p>	<ol style="list-style-type: none"> <li>1. տնկանյութի աճեցման համար անհրաժեշտ սարքավորանքները և գործիքները վարակազերծված են</li> <li>2. տնկանյութի աճեցման համար անհրաժեշտ սննդային միջավայրը պատրաստ է,</li> <li>3. վիրուսազերծ բույսերի աճեցման գործընթացը կատարված է,</li> <li>4. մշակաբույսերի արմատակալած բուսակները նախապատրաստված են,</li> <li>5. մշակաբույսերի վիրուսազերծ տնկանյութի աճեցման համար հողախառնուրդի կազմը որոշված է,</li> <li>6. մշակաբույսերի վիրուսազերծ տնկանյութի խնամքի աշխատանքները կատարված են,</li> <li>7. նախապատրաստական աշխատանքների արդյունքների վերաբերյալ փաստաթղթերը լրացված են:</li> </ol>
<p><b><u>Խնդիրների բնագավառ 2.</u>      Կազմակերպել և կատարել մշակաբույսերի սածիլում</b></p>	
<p><b>Աշխատանքային գործընթացը</b></p>	<p>Ըստ մշակաբույսերի առանձնահատկությունների. գնահատել սածիլների որակը և նախապատրաստել տնկման, կատարել սերմերի պահանջվող քանակության հաշվարկ, կատարել սածիլում, կատարել հետցանքային առաջին աշխատանքներ, կատարել աշխատողների հրահանգավորում, կազմել աշխատանքների վերաբերյալ փաստաթղթեր:</p>
<p><b>Կատարման չափանիշներ</b></p>	<ol style="list-style-type: none"> <li>1. ճիշտ է գնահատում սածիլների որակը և նախապատրաստում տնկման,</li> <li>2. ճիշտ է կատարում սերմերի պահանջվող քանակության հաշվարկը,</li> <li>3. ճիշտ է կատարում սածիլման գործողությունները,</li> <li>4. ճիշտ է կատարում հետցանքային առաջին աշխատանքները,</li> <li>5. ճիշտ է կատարում աշխատողների հրահանգավորումը</li> <li>6. ճիշտ է կազմում աշխատանքների վերաբերյալ փաստաթղթերը:</li> </ol>
<p><b><u>Խնդիրների բնագավառ 3.</u>      Կազմակերպել և կատարել մշակաբույսերի խնամքի աշխատանքներ</b></p>	
<p><b>Աշխատանքային գործընթացը</b></p>	<p>Ըստ մշակաբույսերի առանձնահատկությունների. կատարել տեխնոլոգիական քարտով սահմանված մշակաբույսերի խնամքի բոլոր գործողությունները, պահպանելով աշխատանքի անվտանգության</p>

	<p>կանոնները</p> <p>կատարել ոռոգման գործողություններ</p> <p>կատարել աշխատողների հրահանգավորում,</p> <p>կազմել խնամքի գործընթացի վերաբերյալ փաստաթղթեր:</p>
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1. ճիշտ է կատարում տեխնոլոգիական քարտով սահմանված մշակաբույսերի խնամքի բոլոր գործողությունները, պահպանելով աշխատանքի անվտանգության կանոնները</li> <li>2. ճիշտ է կատարում ոռոգման գործողությունները</li> <li>3. ճիշտ է կատարում աշխատողների հրահանգավորումը,</li> <li>4. ճիշտ է կազմում խնամքի գործընթացի վերաբերյալ փաստաթղթերը:</li> </ol>
<b>Խնդիրների բնագավառ 4. Կազմակերպել բերքահավաք</b>	
<b>Աշխատանքային գործընթացը</b>	<p>Ըստ մշակաբույսերի առանձնահատկությունների.</p> <p>գնահատել բերքի հասունության վիճակը,</p> <p>կատարել տեխնոլոգիական քարտով սահմանված մշակաբույսերի բերքահավաքի բոլոր գործողությունները, պահպանել աշխատանքի անվտանգության կանոնները,</p> <p>հրահանգավորել աշխատողներին:</p>
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1. ճիշտ է գնահատում ըստ մշակաբույսի բերքի հասունության աստիճանը,</li> <li>2. ճիշտ է կատարում տեխնոլոգիական քարտով սահմանված մշակաբույսերի բերքահավաքի բոլոր գործողությունները, պահպանում է աշխատանքի անվտանգության կանոնները,</li> <li>3. ճիշտ է կատարում է աշխատողների հրահանգավորումը,</li> <li>4. ճիշտ է կազմում բերքահավաքի գործընթացի վերաբերյալ փաստաթղթերը:</li> </ol>
<b>Խնդիրների բնագավառ 5. Կազմակերպել և կատարել հիդրոպոնիկ եղանակով բույսերի մշակություն</b>	
<b>Աշխատանքային գործընթացը</b>	<p>Համաձայն հիդրոպոնիկ եղանակով աճեցվող բույսերի ագրոտեխնիկայի.</p> <p>կատարում է բույսի վեգետացիայի ընթացքում լցանյութերի բարելավման գործողությունները,</p> <p>որոշում է բույսերի պաշտպանության միջոցառումների ժամկետները:</p>
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) ճիշտ է ներկայացնում բույսի վեգետացիայի ընթացքում լցանյութերի բարելավման գործողությունները,</li> <li>2) ճիշտ է կատարում լցանյութերի բարելավման գործողությունները,</li> <li>3) ճիշտ է որոշում բույսերի պաշտպանության միջոցառումների ժամկետները,</li> <li>4) ճիշտ է ընտրում և նախապատրաստում բույսերի պաշտպանության</li> </ol>

	<p>նյութերը,</p> <p>5) ճիշտ է կատարում բույսերի պաշտպանության գործողությունները,</p> <p>6) ճիշտ է պատրաստում ըստ իրավիճակի սննդարար լուծույթը,</p> <p>7) ճիշտ է կատարում բույսերի ձևավորման աշխատանքները,</p> <p>պահպանում է աշխատանքի անվտանգության կանոնները:</p>
<p><b>Խնդիրների բնագավառ 5. Կազմակերպել և ներդնել պաշտպանված գրունտում կաթիլային ոռոգման և ցողարկման տեխնոլոգիաները և համակարգերը</b></p>	
<p><b>Աշխատանքային գործընթացը</b></p>	<p>Ընտրում է ոռոգման տեխնոլոգիան և համակարգերը, կատարում կաթիլային ոռոգման և ցողարկման համակարգերի նախագծում, կազմում ոռոգման համակարգի պլանը, պլանավորում կաթիլային ոռոգման և ցողարկման համակարգերի տեղակայման սխեման:</p>
<p><b>Կատարման չափանիշներ</b></p>	<p>1) ճիշտ է ներկայացնում ոռոգման տեխնոլոգիաները պաշտպանված գրունտում,</p> <p>2) ճիշտ է կատարում ոռոգման տեխնոլոգիայի և համակարգի ընտրություն,</p> <p>3) ճիշտ է ընտրում կաթիլային ոռոգման և ցողարկման համակարգերի հիմնական տարրերը,</p> <p>4) ճիշտ է կատարում կաթիլային ոռոգման և ցողարկման համակարգերի նախագծում,</p> <p>5) ճիշտ է կազմում ոռոգման սխեման,</p> <p>6) ճիշտ է կազմում ոռոգման համակարգի պլանը,</p> <p>7) ճիշտ է որոշում ծախսվող ջրի քանակը,</p> <p>8) ճիշտ է որոշում կաթիլային անցքերի չափերը և դրանց միջև եղած հեռավորությունը,</p> <p>9) ճիշտ է կազմակերպում կաթիլային ոռոգման և ցողարկման համակարգերի տարրերի տեղակայման աշխատանքները,</p> <p>10) ճիշտ է կազմակերպում կաթիլային ոռոգման և ցողարկման համակարգերի շահագործման և պահպանման աշխատանքները:</p>
<p><b>III. Պատասխանատվությունը /անմիջական պատասխանատվության շրջանակ/</b></p>	<p>Տեխնիկ-ագրոնոմը պատասխանատու է պաշտպանված գրունտի պայմաններում ագրոտեխնիկական միջոցառումների ժամանակին և ամբողջությամբ կատարման, տարածքի արդյունավետ օգտագործման, մշակաբույսերի բերքատվության բարձրացմանը ուղղված միջոցառումների կատարման, բերքի որակի ապահովման, կիրառվող տեխնիկական միջոցների ճիշտ օգտագործման, անվտանգության կանոնների պահպանության համար:</p>
<p><b>IV. Լեզուները</b></p>	<p>հայերեն- գերազանց</p> <p>ռուսաց լեզու- բավարար</p>

	այլ օտար լեզու- բավարար
<b>V. Համակարգիչը</b>	ա. MS Word բավարար բ. MS Excel բավարար գ. Internet Explorer բավարար
<b>VI. Գիտելիքները</b>	<ul style="list-style-type: none"> <li>• պաշտպանված գրունտի կառույցներում գյուղատնտեսական արտադրության կազմակերպման առանձնահատկությունները,</li> <li>• պաշտպանված գրունտի կառույցների տիպերը, դրանց հնարավորությունները,</li> <li>• պաշտպանված գրունտի կառույցներում հողի և գրունտի ձևավորման առանձնահատկությունները,</li> <li>• պաշտպանված գրունտի կառույցներում կիրառվող մեքենաները, սարքավորումները, գործիքները,</li> <li>• պաշտպանված գրունտի կառույցների միկրոկլիմայի կարգավորման առանձնահատկությունները,</li> <li>• պաշտպանված գրունտում կաթիլային ոռոգման և ցողարկման տեխնոլոգիաները և համակարգերը,</li> <li>• մշակաբույսերի պարարտացման և սնուցման համակարգերը, կիրառվող պարարտանյութերի և սնուցող նյութերի տեսակները,</li> <li>• հողի ու մշակաբույսերի հիվանդությունները և վնասատուները, պայքարը դրանց դեմ,</li> <li>• ախտահանման աշխատանքների անհրաժեշտությունը, նշանակությունը, ձևերը, կիրառվող նյութերը և իրականացումը,</li> <li>• ցանքի և սածիլման աշխատանքներ,</li> <li>• պաշտպանված գրունտում մշակաբույսերի մշակության տեխնոլոգիաները և վիրուսազերծ տնկանյութի ստացման և աճեցման աշխատանքները,</li> <li>• մշակաբույսերի ձևավորման մեթոդները:</li> </ul>
<b>VII. Կարողությունները և հմտությունները</b>	<ol style="list-style-type: none"> <li>1. պարարտացման և սնուցման չափերը հաշվարկելու և ռեժիմները սահմանելու կարողություն,</li> <li>2. հողի փաստացի վիճակը գնահատելու կարողություն,</li> <li>3. գործիքներն ու սարքավորումները ճիշտ ընտրելու, ռեժիմները կարգավորելու կարողություն,</li> <li>4. հողի և մշակաբույսերի հիվանդությունների ու վնասատուների ճանաչման, դրանց դեմ պայքարի կազմակերպման կարողություն,</li> <li>5. աշխատողներին հրահանգավորելու կարողություն,</li> <li>6. սերմերի ու սածիլների ընտրության և նախապատրաստման հմտություններ,</li> </ol>

	<p>7. բերքի հասունության գնահատման հմտություն,</p> <p>8. ցանքի և սածիլման աշխատանքների կազմակերպման հմտություն,</p> <p>9. կատարված աշխատանքների արդյունքները գնահատելու հմտություն:</p>
<p><b>VIII. Անձի որակական հատկանիշներ</b></p>	<p>Պարտաճանաչ, կարգապահ, շփվող, նախաձեռնող, մաքրասեր, նորը ընկալող, թիմում աշխատելու պատրաստ, ընկերասեր, համբերատար:</p>